ՁԻԼԻԶԱ

Շրջանի ծայր հյուսիսային բնակավայրն է, կից Ախքյորփի և Չանախչի հայկական գյուղերին:

Գյուղի մեջ և շրջակա անտառներում պահպանվում են մի շարք հուշարձաններ՝ բնակատեղիներ, եկեղեցիներ, մատուռներ, գերեզմանատներ: Դրանց թվում առանձնապես կարևորվում են Չախկալաբերդ հզոր ամրոցն ու Խորակերտի վանքը: Ամրոցն առավել լավ պահպանվածներից է, 10-15 մ բարձրությամբ պատերով, կիսաշրջան աշտարակներով, որոնց որմածքում կան սենյակներ: Փլատակները չեն պեղվել, իսկ արձանագրություններ չեն նկատվել:

ԽՈՐԱԿԵՐՏԻ ՎԱՆՔ

Հյուսիսային Հայաստանի նշանավոր վանական հաստատություններից էր: Գտնվում է Ձիլիզա գյուղից մոտ 4 կմ հարավ-արևելք, Լալվար լեռան ստորոտում: Ներկայումս երբեմնի խոշոր վանքից մնացել են մեծ՝ Ս. Աստվածածին եկեղեցին, կիսակործան գավիթը, ավերակված սեղանատունը, երկու մատուռներ և խաչքարեր:

Եկեղեցին, որն իր իսկ վիմագրերում կոչվում է «սուրբ ուխտ», «սուրբ եկեղեցի», իսկ 1707 թ. վերանորոգման արձանագրության մեջ Ս. Աստվածածին, չորս ավանդատնով, ներքուստ խաչաձև հատակագծով ուղղանկյուն շինություն է:[51] Տանիքը կրում են վեց խաչաձևող կամարներ, որոնք ավարտվում են ստալակտիկային զարդաձևի քարաշարով և որպես կլոռուցողական հնարանք ծառայում իբրև գմբեթի հիմքին անցնելու միջոց: Ինքնատիպ է նաև գմբեթը: Թմբուկի վերին կեսն ութանիստ է, իսկ ստորինը կազմում են երեսուն քառանիստ սյուները: Այսօրինակ կառուցվածքը ձևավորման նրբագեղ և ինքնատիպ միջոց լինելուց բացի միաժամանակ ծառայում է նաև լուսավորման նպատակներին:

Գմբեթակիր կամարները պահող ներսի չորս մույթաձև մշակված պատերի անկյունները ձևավորված են կլորավուն երեք որմնասյուների փնջային եղանակով, որոնք առավել շեշտում են ներքին ծավալատարածական հորինվածքի ուղղահայաց սլացիկության վայելչա-գեղությունը: Պատերին սվաղի ու որմնանկարների հետքեր կան:

Գավիթը ևս աչքի է ընկնում ճարտարապետական հարուստ ձևերով: Այստեղ ևս օգտագործված է խաչաձևով կամարների կառուցվածքային համակարգը, ինչպես Խորանաշատում, Հաղբատավանքում և այլուր:

Սեղանատունը կամարածածկ տանիքով ուղղանկյուն երկարավուն շենք է եղել, որից մնում են միայն ստորին շարքերը:

Մատուռները փոքրիկ քաղաածածկ շինություններ են, ավերված:

Ամբողջ համալիրը կառուցվել է սպիտակաղեղնավուն քարից: Ժամանակին շրջափակված է եղել պարսպապատերով, որոնց ներքո գտնվել են նաև միաբանների բնակելի տները:

Մատենագրական սկզբնաղբյուրներում վանքի կառուցման փաստը չի արձանագրվել, և տեղեկությունները տալիս են գերազանցապես վիմական վկայագրերը, որոնցից տեղեկանում ենք 1252 թվականին եկեղեցու կառուցման մասին:

---

[51] Շախկյան, Լոռի, 133-134:

Վարդան Արևելցի պատմիչի վկայությամբ, բնակավայրը հիմնել է Խոռ նահապետը, որի անունով կոչվել է Խորակերտ: Հետագայում կառուցված վանքը գյուղանունով կոչվել է Խորակերտի վանք:

Վանքի պատերին եղած արձանագրությունները վերաբերում են ԺԳ դարի երկրորդ կեսին և մեծ մասամբ ավանդում են նվիրատվությունների մասին: Հետագա հիշատակագրերը վերաբերում են նորոգություններին:

551. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի շրջանակներին և կիսակամար ճակատաքարին, 12 տող.

Ի ԹՒԻՍ ՉԱ (1252), Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ[Ա]Ն ՏՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ, ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊ-
ՈՍՈՒԹԵ[Ա]Ն ՀԱՍԱՉԱՍՊԱ, ԵՒ ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵ[Ա]Ն ԵՒ Ի ՉԱՒՐԱՊԵՏՈՒԹԵ[Ա]Ն
ՍԱԹՈՒ

ՆԻՆ, Ի ԹԱԳԱ[Ւ]ՈՐՈՒԹԵԱՆ ԴԱՒԹԻ, ԵՍ՝
[ՍՏ]ԵՓԱՆՈՍ, ՈՐԴԻ ՅՈՀԱՆԱ, ԳՆԵՑԻ ՉԽՈՌԱԿԵՐՏ ԵՒ ՉԻՐ ԳԵՂՆ, ԵՒ Զ-
ԱՅԳԻՆ, ՈՐ Ի ՇՂԻԵՐ ՎԱՆԻ-
ՑՍ, ՅԱՒԻՏԵԱՆ Ի ԿՌ (60000) ՍՊԻՏԱԿ ՍՈՒԼՏԱ-
ՆԻ ԵՒ ՇԻՆԵՑԻ ՉՍԱ Ի ՀԻՄԱՆԷ՝ ՍԿՍԵ[Ա]Լ Յ-
ՈՒՍՈՎ ԱՆՄԱՀԻՆ ԱՅ: ԼԻՆԵԼ ԻՆՉ ԵՒ ԵՂԲԱ-
ՐՑ ԻՄՈՑ ԵՒ ՈՐԴՈՑ ԱՐՉԱՆ ԿԵՆԴԱՆԻ ԵՒ ՏԵՂԻ
ԳԵՐԵՉՄԱՆԻ ՍԻՆՉԵՒ ԳԱՅ ՔԱ ԵՒ ԱՌՆԷ ՈՂՈՐՄՈՒԹԻ[ՒՆ]
ԻՆՉ ԵՒ ԻՄՈՑՆ՝ Ի ՓԱՌՍ ԻՒՐ: ԱՐԴ, ՈՐՔ ԽԱԽՏԵԼ ՉԱՆԱՆ ՉԻ-
Մ ՏՈՒՐՍՆ ՅԵԿԵՂԵՑՈՅՍ ԵՒ ԿԱՄ ՉՏԵՂԻՍ ՀԱՆԵԼ ՅԱՉԳԷ Ի-
ՍՄԷ, ԽԱԽՏԵՍՑԻՆ ԵՒ ԱՆԿՑԻՆ ՀԱՒԱՏՈՑ ԵՒ Ի ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵՆԷ:

Հրատ. Ջալալյանց, Ա. 87, «Ազգ. հանդ.», VII-VIII, 425, ՎՏ, 97.
Հովսեփյան, Նյութեր, Ա. 229-230, Ոսկյան, Գվ. 27-28:

Ծանոթ. Արձանագրության մեջ հիշատակված հայրապետը Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսն է (1221-1267), իսկ Համազասպ արքեպիսկոպոսը՝ Հաղբատավանքի առաջնորդը, այդ վիճակի մեջ էր նաև Խորակերտի վանքը: Սադունի անվան տառերը մասամբ ջնջված են, բայց ընթերցվում են հավաստիաբար (ՍԱԹՈՒՆ): Այստեղ հիշատակվածը Ամիր Քրդի ծոռն է, Կայենի և Մահկանաբերդի մեծ իշխան Սադուն Բ-ն, որը 1252-ին արդեն մեծ հեղինակություն էր վայելում, անունը հիշատակվում է թագավորից առաջ՝ իբրև աշխարհակալ (այս դեպքում՝ երկրամասի տիրող, իշխան) և զորապետ, քանի որ նա աթաբեկությանն պաշտոն է ստացել 1270-ին:

Գ. Հովսեփյանի կարծիքով, վանքը կառուցող Ստեփանոսը Ումեկ Մանազկերտցու ազգականն է, իսկ 60 հազար սպիտակը հավասարեցնում է 6000 ոսկե դրամի (Նյութեր, Ա, 10, 12):

Շղվերը տեղանուն է՝ դիտված Գուգարքում ԺԱդ. պատմիչ Զուանշերի երկասիրության մեջ (տես Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա. Յերևան, 1934, էջ 195): *Շղեր վանիցս* պետք է, թերևս, ըմբռնել այն այգին, որը գտնվում է վանքից հյուսիս, վերին կողմում: *Զիմ տուրսն յէկեղէցոյս* պետք է մեկնել *իմ տվածը, բարիքները, վարձատրությունը* իմաստով:

Զալալյանցը գրել է առաջին տողերի իմաստը՝ պատմողաբար, անհասկանալի կերպով մենաստանը կառուցողին համարել «Իշխանն Ստեփանոս որդի Յոհաննայ Կարնեցւոյ», թիվն էլ կարդացել է չհա: Լալայանի մոտ ամբողջական ու ճիշտ է, բայց նա բաց է թողել *Սաթունի* անունը, *Շղեր*ը կարդացել է *Շղեր, ԿՌ (60000) սպիտակը՝ կա սպիտակ՝* այն չդիտելով թվարժեք, վրիպել է վերջին տողի *հաւատոցն* բառը: Կոստանյանցը, կրկնելով Լալայանի վրիպումները, կատարել է և կրճատումներ:

552. ԳԱՎԻԹ. արևելյան պատի որմնասյան կամարի վրա, երեսով արևմուտք, եկեղեցու մուտքից ձախ, 16 տող.



[ԹՈՒԻՆ] ՉԺԷ (1268):
ԿԱՄԱՒ ԱՆ-
ՄԱՀԻՆ Ա՝Յ, ՄԵՔ՝ ՈՒՔ-
ԱՆՍ ԵՒ ՊԱՊՔԱՆՍ, ՈՐԴ-
ԻՔ ՍԱՐԳՍԻ, ԹՈՌՆ ՀՈ-
ԳՈՅՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ
ՍԲ ՈՒԽՏԻՍ ՀՐԱՄԱՆԱՒ
ԱՇԽԱՐՀԱԼՈՅՍ
Վ[ԱՐ]ԴԱՊԵՏԻՆ Վ[ԱՐ]ԴԱՆԱ:
ԵՒ Տ[Է]ՐՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ Ե-
ՏՈՒՆ ՄԵԶ ԶՀՈ-
ԳՈՅՆ ԳԱԼԸՍՏԵԱ-
Ն ԱՒՐՆ ՅԱՄԷՆ ԵԿ-
ԵՂԵՑԻՔՍ ԺԱՄՆ ԷՄԷՆ Տ-
ԻԿՆԱ ԵՒ ՅԵՏ ՄԵՐ ՄԱՀ-
ՈՒԱՆՆ՝ ՄԵԶ ԱՌՆԵՆ ԱՆԽԱՓԱՆ:

Հրատ. Զալալյանց, Ա, 87 (ակնարկում է սոսկ), Գ. Հովսեփյան, Նիւթեր, Ա, 13 (231-232):

Ծանոթ. Վերջին տողը կամարակիր խոյակի վրա է: Ուքանի ու Պապքանի մասին այս արձանագրությունը տալիս է գրեթե այն բոլորը, ինչ հայտնի է այլ աղբյուրներից (Գ. Հովսեփեան, Նիւթեր, Ա, 12-13):

Արձանագրությունն ուշագրավ է նախ նրանով, որ վկայում է պատմիչ Վարդան Արևելցու՝ աշխարհալույս վարդապետի առաջնորդության մասին տակավին 1268 թ., այսինքն՝ վանքի հիմնադրումից սկսած 16-րդ տարին, երկրորդ՝ որ 1268 թվականին գավիթն արդեն կառուցված էր:

Այն, որ գավիթը կառուցվել է եկեղեցուց ոչ շատ ժամանակ անց, վկայում են նաև ոճական առանձնահատկությունները՝ եկեղեցու արևմտյան արտաքին պատին հպված, բայց ոչ կցարկված որմնամույթերը, եկեղեցու ու գավթի մուտքերի գարդապատկերների կրկնությունը և, որ շատ ակնառու է, խաչաձևվող կամարների տեխնիկական համաբնույթ եղանակները, որոնց մեջ նկատելի է ճարտարապետական ու ճարտարագիտական ոգու համանմանությունը: Անորոշ է մնում, թե ո՞ւմ թոռներն են Ուքանն ու Պապքանը, և *թոռն հոգոյն* կապակցությունում *հոգոյն* հանդես է գալիս իբրև նրանց պապի անուն, որը բառացի հասկանալ հնարավոր չէ: *Յամէն եկեղեցիքս* դարձվածը վկայում է, որ վանքում եղել է մեկից ավելի եկեղեցի, և այն կարող է վերաբերել ավերված մատուռներին: *Էմենտիկնա* իգական անձնական փոխարեն հանդիպում է *Ամենտիկնա* ձևը: Չի բացառվում, որ այս դեպքում հատվածը վերծանվի *ամէն եկեղեցիքս ժամն էմեն* (=ամէն, բոլոր) *Տիկնա՝* որպիսի անունը գործածական էր միջնադարում: Բայց գերապատվությունը տրվում է առաջինին:

553. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատի արևելյան կամարի մեջ, կիսաեղծ, 5 տող.



ԿԱՄԱ ԲԱԲԵՐԱՐԻՆ ... ԵԻ ԱՅՆ ԵՍ ԷՓԿԱԲՆ ԱՅՆ ՅԱՅՄԵԼԵՐ
ԵՅԱՄԵԿԵՂԵՑՈՅՍ ... ԱՅԵՍՈՐԱՀՈՒՆՆԶՊԿԳԶՏԱՆՄԱՍ ...
ՈՅԵԵՄՈՔԻՆ ՀԱՅՍԳԳՈՐԵԱՆԵԷԱՍՎ ... ԷԼՈՅՆՅՈՀՆՆՈՒԵՅԱՐԱՍԿՀԱՐՆԲ
ԱԾԱԾՆՆՇԱԷԹՆԱՆԶ ... ԵԿԵՂԵՑԻՍՈՒԲՎԵԱՀՈՅՈՅՆԵԱՀԱԹԷԻՆԶԱԳ
ՊԱՄԷ ԶՇԱ ԱԹՆ ԱՅԻՆԿԱՄԱՍՈՒԲՆԵԱՀԵՍՅԻՆԱՆԹԼԶԼԳ

ԿԱՄԱՍ ԲԱՐԵՐԱՐԻՆ...[ԵՎ ԱՄՆԱ]ԽՆԱՄԱՍՔՆ ԱՅ, ԵՍ՝ ՍՏԵՓԱՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ԱՐ
ԴԵԱՄՔ. ԵՂԲԵՐ-
ԵՑՍ ԱԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ [ԽՈՐԱԿԵՐՏ]ԱՅՍ ԵՎ ՍՈՔԱ ԵՏՈՒՆ ԻՆՁ ՊԱՏ[ԱՐԱ]Գ ԶՏԱՍ[ԻՆ]
ԱԲ ԱՌԱ՝ՔԵԼԻ-
ՈՅ, ԵՎ ԵՏՈՒ ԱՐԴԻՒՆՍ; ՀԱՅՐՍ՝ ԳՐԻԳՈՐ, ԵՎ ԱՄԷՆ ԵՂԲԱՐՔՍ, ՏԻ՛Ն ԱՌԱ՝ՔԷԼՈՅՆ
ՅՈՀԱՆՆՈՒ ԵՎ ՅԱԿՈԲԱ ԻՄ ՀԱՒՐՆ Ք...
...[ԱՍՏՈՒ]ԱԾԱԾՆԻՆ ՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ Զ[ԱՄԵՆԱՅՆ] ԵԿԵՂԵՑԻՔՍ ՈՒՔԱՆԱ ԵՎ ԱՄՈՒՍՆՈՅՆ
ԻՄ ՇԱՔԱՐ ԽԱԹ[ՈՒՆԻՆ] ԵՎ ԻՆՁ: ԱՐԴ.
ՊԱՐՏ Է ԶՇԱՓԱԹՆ ...ԱՅԻՆ: ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱՒՐՀՆԵՍՅԻՆ: ԱՄԷՆ: ԹՎ[ԻՆ]: ՉԼԳ: (1284):

Ծանոթ. Գրիգոր վանահոր անունը հիշատակված է նաև 1289 թ. արձանագրության մեջ: Սա նրա առաջին վկայությունն է:

554. ԳԱՎԻԹ. Նախորդի տակ, եղծված, հազիվ կարդացվում է մի քանի բառ. 2 տող.



ԵԶ ՐԿՆ ԸՆՈՒ . Բ ՈՀԱՆԱԿԱՄ
ՈՂ ԱՒ ՅԵ ՆՈՔՆԶԻԵՏՆ

ԵՎ Զ...Ր[Ա]ԿՆ... ԲԱՆՈՒ...Բ ՈՀԱՆՆԱ ԿԱՄԱ...
ՈՂ ... ԱՒ ...ՅԵ: [ԽԱՓԱ]ՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ Ի ՏՆ:

555. ԳԱՎԻԹ. հարավարևելյան որմնակամարի ներքևի մասում, 4 տող.

ՇՆՈՐՀԱՒՔ ՀՈԳՈՅՆ ԱՅ ԵՍ՝ ԽՈՑԱՂԵՂՍ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԿԱՒԻՆՆ, ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՔ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԵՒ ՏՎԱՔ ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ՄԵՐՈՑ: ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ ՀԱՅՐ, ԵՒ ԵՂԲԱՅՐՔՍ ԽՈՍՏԱՑԱՔ ԶԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶՍԻՄԱՒՆԻ ԽԱՉԳԻՒՏԻՆ: ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ ԵՒ ԽԱՓԱՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ: ԹՎԻՆ ՉԼԸ (1289):

Ծանոթ. Գրերը մաշված են, թվականի տառերի ստորին մասը՝ ջարդված: Վանքի առաջնորդներին ներկայացնելու առումով Խորակերտի արձանագրություններն ունեն որոշ բծախնդրություն. օրինակ, Գրիգորը երեք արձանագրություններում մեծարված է *հայր* (վանահայր, առաջնորդ) մակդիրով, որպիսին չունեն ոչ միայն մյուսները, այլև ինքը՝ Գրիգորը բոլոր հիշատակարաններում: Արդյոք տարիքային պարագաներով կամ հեղինակությամբ չի՞ պայմանավորված այս երևույթը: *Մկաւնն* անունը գուցե և այլ կերպ կարելի է կարդալ՝ կապգրերի այլ դասավորությամբ:

556. ԳԱՎԻԹ. նախորդից վերև, նրա հետ միասին, 3 տող.

ԵԱՍ ԳՐԻԳՈՐ ՄՈՒՍՆԻՆԱ ԹՈՒՆՔԱՅԲԱՆԵՑԱՔՍ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԱՐԴԵՄԲՔ ԵՍ ԳՐԻԳՈՐ, ԵՒ ԱՄԷՆ ՄԻԱԲԱՆԵՔՍ, ՏՎԱՔ ԶԾԱՌԶԱՐՂԱՐ ԱՒՐՆ ՊԱՏԱՐԱԳ ԿԻՒՐԻԿԷԻՆ, ՅԱԿՈԲԻՆ ԵՒ ՅԵՏ ՄԵՐ ԵԼԻՑՆ՝ ՄԵԶ ԱՌՆԵՆ ԱՆԽԱՓԱՆ:

Ծանոթ. Գրչության ոճը նման է նախորդին և ժամանակակիցն է: Այստեղ Գրիգորի անվանը չի ուղեկցում հայր բնութագիրը:

557. ԳԱՎԻԹ. նախորդից վերև, 3 տող.

ԿԱՐԱՆ ԱՅԵ Ս ՍՈՒՄԲԱՅՍ ՄԱՆՎԷԼՍ ԴԱՆԷԼՍ ՆԷՐՍԱՅՍ ՄԱՅԲԱՆԵՑԱՔՍ ԱՌԱՔԱՒՈՐԱՅՍ ԳՐԻԳՈՐԻՆԱԿԱՆ ԱՅԻՆԵԿԱՄԱՆՔՆ ԱՅՍ

ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՍՈՒՄԲԱՅՍ, ՄԱՆՎԷԼՍ, ԴԱՆԷԼՍ, ՆԷՐՍԱՅՍ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ: Տ[Է]ՐՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ :Ա: (1) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՏՈՒՆ ՍԲ ԳՐԻԳՈՐԻ ՏԱՒՆԻՆ: ԳՐԻԳՈՐԻՆ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԱՌՆԵՆ: ԿԱՏԱՐԱՒՂՔՆ ԱՒՐՀՆԻՆ ԱՅ:

Ծանոթ. ՍՈՒՄԲԱՅ անվան առաջին Ս տառի վրա մի Գ է ավելացված թույլ կերպով, նույնպես և միջին Մ տառը թույլ է գծագրված: Ժամանակով մոտ է նախորդներին՝ 13-րդ դար:

558. ԳԱՎԻԹ. նախորդներից վեր, կամարի տակ, 4 տող.

ԿԱՌԱՐՆԱՅԵՍՑԻՆԵՄԵՆԱՍ ՄԱՔԱՆՆՑԱ.
ԲՄՈՒԹԵԱՐԻՆԱՐԲԵ ԵՐՈՒՍԱԼԵՄՍԱՊՆՔԱՆ ՄՆ
ԵՒԲԷՆԲԻՍ ԱԼԱՐՊԱՄԱԳԻԱԼՈՒԹԵՆԵՐԷ ԵԱՄԵՆ ԷՅՆ
ՄԵՐՄԱՀՈՒԵՆՔԱՐՆԵՆԽԱՓԷՆ

ԿԱՍԱՒԲՆ ԱՅ ԵՍ՝ ԲԱԳԻՆԱ ԵՒ ՍԱՆԱՍ, ՄԻԱԲԱՆԵՑԱ-
Ք ՍԲ ՈՒԽՏԻՍ ԱՐԳԵԱՄԲՔ ԵՒ ԵՏՈՒՆ Ի ՏԱՒԵԻ ՏԱՊԱՆԱԿԻՆ, Տ[Է]ՐՍ
ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ, Ա (1) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ԽԱԹՈՒՆԻՆ, ԵԼԲԷԿԻՆ ԵՒ ՍՄԱՆԻՆ: ԵՒ ՅԵ-
Տ ՄԵՐ ՍԱՅՈՒՆ՝ ՄԵՋ ԱՌՆԵՆ ԱՆԽԱՓԱՆ:

Ծանոթ. ժամանակով մոտ է նախորդին՝ ԺԳ դար: *Տէր* գործածված է առաջնորդի՝ երևի թե նույն հայր Գրիգորի փոխարեն: Կա շփոթություն, թե Տէրը կարող է և անձնանուն լինել, բայց, հատենայն դեպս, ոչ այս դեպքում: *Ամանին* կարելի է կարդալ նաև *Սամանին:*

559. ԳԱՎԻԹ. արևելյան պատի հարավային կամարի վրա, 2 տող.



ԿԱՍԱՒ ՈՂՈՐՄԱԾԻՆ ԱՅ ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ ՀՈՌՈՄԱՅՐԵՑԻ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԱՐԴ
ԵԱՄԲՔ ԵՒ Տ[Է]ՐՍ,
ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ԻՆՉ Ա (1) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒԵԻ ՍՐԲՈ ՍԱՐԳԱՍԻ ԿԻՒՐԱԿԷԻՆ:
ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

Ծանոթ. Հոռոմայրի 1326 թ. մի արձանագրության մեջ հիշված է Սարգիս առաջնորդ: Միանգամայն հավանական է, որ քննվող արձանագրության մեջ հիշատակվածը Հոռոմայրի հիշյալ վանահայրն է, որը հարևան վանքում նվիրատվություն է կատարել՝ ստանալով մեկ պատարագ:

560. ԳԱՎԻԹ. արևելյան պատի հյուսիսային կամարի վրա, թերի, 2 տող.



...[ՄԻ]ԱԲԱՆԵՑԱ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԱՐԳԵՄԲՔ ԵՒ Տ[Է]ՐՍ ԵՒ Վ[ԱՐ]ԴԱՊԵՏԱ
...[ՏՈՒ]ԻՆ ԽՍ (40) ԻՑՆ (քառասնիցն) ԿԻՒՐԱԿԷԻՆ, Բ (2) ՊԱՏԱՐԱԳ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝
ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

Ծանոթ. Սկզբնամասի քարերը ջարդոտված-թափված են: Հիմք ընդունելով նախորդ արձանագրությունները, այս ևս, ուր առկա է ՏԷՐ-ը, առաջնորդի անվան փոխարեն, հավանական ենք գտնում թվագրել 1326-ին մոտ տարիներով:

Այսպիսով, դատելով Խորակերտի արձանագրությունների տվյալներից, կարող ենք նշել վանքի ընդամենը երեք առաջնորդների անուններ.

Վարդան –1252-1268 (արձ. 552):

Գրիգոր – մոտ 1284-1289 (արձ. 553, 555, 556):

Տեր կոչվածը – մոտ 1326 (արձ. 557, 558, 559, 560):

561. ԳԱՎԻԹ. արևելյան պատի հյուսիսային կամարի վրա, 14 տող



ԿԱՄԱՒ ՈՂՈՐՄԱԾԻՆ ԱՅ
ԵՍ՝ ԽԱՉԻԿ, ՄԻԱԲԱՆԵ-
ՑԱ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԱՐԴ-
ԵԱՄԲՔ: ՀԱՅՐՍ՝ ԳՐԻԳՈՐ,
ԵՒ ԱՄԵՆ ՄԻԱԲԱՆՔՍ, ՏՎԱ-
Ք ՁԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱ[թ]
ԱՒՐՆ ԺԱՄ ՁԱՄԷՆ ԵԿԵ[ՂԵ-
ՑԻՔՍ ԹՈՒԽԱՆԻՆ [ԱՐ
ՆԵՆ]...ԱՒԹԷ... Ձ
...Յ[Ե]Տ ԻՄ ԵԼԻՑ
... ԹԱԲՆ ԽԱՉԿԱՆ
... ԵՂԻՑԻ: ՈՐ ԽԱ[Փ-
ԱՆԷ]ԴԱՏԻ ՅԱՅ: Ե[Ւ
ՄԵՐ ՄԵՂ]ԱՑՆ ՏՐ ԼԻՆԻ:

Ծանոթ. Ներքևի տողերը խիստ հողմահարված են:

Գրիգոր առաջնորդի անվան առկայությունը ուղեկցված *հայր* բառով, թույլ է տալիս արձանագրությունը թվագրել ԺԳ դարի 80-ական թվականներով:

562. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. թմբուկի հարավային նիստին, 6 տող.

ԱԾ ՈՂՈՐՄԻ Պ[Ա]Ր[Ո]Ն Շա[Հ]
ՆԱԶԱՐԻՆ ԵՒ ԻՒՐ Ե-
ԽԲՕՐ ԱՖԳԱՆԴԻԼ-
ԻՆ, ՈՐ ԱՅՍ ՍԲ
Ա[Ս]ՏՈՒԱ[Ծ]ԱԾԻՆՍ ՇԻՆ-
ԵՑԻՆ Թ[ՎԻՍ]. ՌԵ. (1701):

Ծանոթ. Եկեղեցու թմբուկի լուսամուտների սյունաշարերի և գավթի վրա տեղ-տեղ ակնառու նկատելի են Շահնազարյանների կատարած նորոգումների հետքերը, որոնք այստեղ որակված են *շինեցին* բայով:

Ամենայն հավանականությամբ, Շահնազարյանների տոհմը Սոդքից Արցախ տեղափոխվելու ժամանակներում նրանց մի ճյուղը գաղթել է Հյուսիսային Հայաստան, ուր ձեռք է բերել կալվածքներ, ձեռնարկել շինարարական ու նորոգչական աշխատանքներ Հաղարծնի վանքում, Կունեն գյուղում (Առաքելոց վանքից ոչ հեռու) (տես Դիվան հայ վիմագրության, պր. VI, Եր., 1977, էջ 55-56, 216) և, իհարկե, Խորակերտում, որը եղել է նրանց տիրույթների մեջ: Պետք է կարծել, որ Խորակերտ ավանը ևս դեռ շեն էր:

563. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ. եկեղեցուց 20մ արևելք, 6 տող.

Ի ԹՎԻ|Ն|ՉԻԹ (1280) ԵՍ՝ ԲԱԼԱԲԱՆՍ, ԵՒ ԵԼԱԿՆ
|ԿԱՆԳՆ|ԵՑԱՔ ՁԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԵ|ԱՆ|3|ԻՇՈ-
ՂԱՑ ԵՒ ՓՈԽԵՑԵԼՈՅՆ ՔՍ ... ԾՆՈՂ-
ԱՑ ՍԵՐՈՅՆ Ի ՄԻԱՅԲԱՆԵՑ Ի ՔՍ ԵԿԵՂԵՑՈ
Ս: ԱՐԴ... ԱՂԱՉԵՍ ՈՐՔ |ԵՐԿՐՊԱԳԵՔ| ՍԲ ՆՇԱՆ-
ԻՍ՝ ԱՍԱՑԵՔ ԱՇ ՈՂՈՐՄԻ ՅԻՇՈՂԱՑՆ: ԱՄԷՆ:

Ծանոթ. Արձանագրությունը տեղ-տեղ մաշված-եղծված է, և որոշ մասեր մնում են երկմտելի: *Բալաբանի* փոխարեն ապասելի էր *Բալասանի:* Հագիվ թե ստույգ է *Ելակն:*

564. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գերեզմանոցում, 1 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԷՄԷՅԱՆԻՆ: Թ|ՎԻՆ|ՌՃԺ (1721):

Ծանոթ. Աշխարհագրական այս միջալայրում տարածված է Քեթևան իգական անունը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ ԿԱՄ ՄՆԱՑԵԼ ԵՆ ԱՆՆԿԱՏ

565. «Մեք երկու եղբարքս միաբանեցաք աստ հրամանաւ տիեզերալույս վարդապետին Վարդանայ»:

Հրատ. Ջալալյանց. Ա. 87:

Ծանոթ. Ըստ հրատարակչի, «յարձանագրութեանց եղելոց ի վերայ եկեղեցւոյս երևի թէ մեծն Վարդան եղեալ է վանահայր սոյն մենաստանիս, ըստ որում ի կողակ կամարին գրեալ կայր» տեղեկանքից հետո մեջ է բերում վիմագիրը, որը, ըստ երևույթին, ծաղկաքաղված է գավթի կամարի ՉԺԷ – 1268 թ. Ուքանի և Պապքանի վավերագրից:

566. «Աստուած ողորմի Վելի որդիս... Պայի պարոն Շահնազարին եւ իւր կողակից Ռուսուգանին, որ այս ս. եկեղեցիս եւ իւր ծնողաց անդարձովն եւ իւր որդի Կորկին շինեցին»:

Հրատ. «Արձագանք», 1884, 614 (նաև՝ թվին ՌՃԲ), «Ազգ. հանդ.», VII-VIII, 426:

567. Նախորդից ներքև (երևի առաջինի շարունակությունն է).

Թվ ՌՃԺ (1661): Յիշեցէք ուստայ Շահնազարին:

Հրատ. «Ազգ. հանդ.», VII-VIII, 426:

Ծանոթ. Լալայանի իրավացի դիտողությամբ՝ «Հաւանական է, որ սրանք վերանորոգած լինին եկեղեցին և ոչ շինած», որն ինքնին իրողություն է: Նրա ասելով՝ արձանագրությունը գտնվում է «եկեղեցու հիւսիսային պատի վրայ արտաքուստ»:

568. ԽԱՉՔԱՐԻ վրա.

Սուրբ Նշան Տէրունական:

Հրատ. «Ազգ. հանդ.», VII-VIII, 426:

Ծանոթ. Ըստ Լալայանի, խաչքարը եղել է պարսպի ներսի գերեզմանոցում, *գեղաքանդակ* և *Փրկչի պատկերով:*

569. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Խորակերտ վանքից ոչ հեռու, Չանախչի գյուղի արևելակողմի եկեղեցու շրջապատի գերեզմանոցում. գեղագիր, 3 տող.

ԱՅՍ է ՏԱՊԱՆ
ՅԵՂԱՐԻՆ: ԹՎ[ԻՆ]Ո
ՂԸ (1649):

Ծանոթ. Եկեղեցին սագաշեն է, շարված ճեղքած քարով, հարավից կցված է փոքր սրահ: Գերեզմանոցում թաղումներ են արվում մինչև այժմ: Շիրմաքարերը հիմնականում անմշակ են:

570. ՍԱԼԱՏԱՊԱՆ. Չիլիզայի գյուղամիջյան գերեզմանոցում, եռահատված, 8 տող.



ԱՅՍ է ՏԱ-
ՊԱՆ ՊԱ-
ՐՈՆ ԽՕՍ-
ՐՈՎԻՆ,
ՈՐ ՓՈԽԵ-
ՑԱՒ ԱՌ
ԱՇ ԹՎԻՆ
ՌՃԺ (1661):

Ծանոթ. Գուցե թիվն ունի նաև միավոր, բայց քարի այդ մասը ջարդված է: Գերեզմանոցում կան արձանագիր այլ տապանաքարեր ևս՝ ջարդուփշուր վիճակում:

571. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Նույն գերեզմանոցում, կարմրավուն քարից, երկատված, ձեռքերը կրծքին ծալած հարթաքանդակով, 3 տող.



ԱՅՍ է ՀԱՆԳԻՍՏ
ՈՐԴԷԼԻ ՁԱՔԱՐԻ
ԿԻՆ ՓԱՐԻՆԱՆԻՆ;

Հրատ. «Լրաբեր», 1980, 3, 88:

Ծանոթ. Տարածված են ***Փարիշան, Փարիճան, Փարիխան*** իգական անձնանունները, բայց այս դեպքում ***Փարինան*** է:

«ՎԵՐԻՆ ՎԵԼԱԴ» ՎԱՆՔ

Խորակերտից ոչ հեռու, Չիլիզայից 3կմ վրա, դարավոր անտառի մեջ պահպանվում է հնամենի, մինչև 15 մ բարձրությամբ աշտարակներով Չախկալաբերդ կամ Սև բերդ հզոր ամրոցը:

Ամրոցից 1,5 կմ հեռու, Վերին Վելադ կոչվող հանդամասի մոտ մնում են բազիլիկաները՝ կիսավեր վիճակում: Ճեղքած քարով շենքերը, համաձայն արևմտյան մուտքի ընկած ճակատաքարի հայերեն և վրացերեն արձանագրության, կառուցվել են ՌԵԿ – 1711 թվականին: